վանս Ս. Փրկչի՝ եւ զայլ տեղիս, զորս վերստին դնեաց Դաւիթ պատրիարք։ Զի 'ի ժամանակին յայնմիկ եկ հրաման Արքունուստ վաճառել զկալուածս եկեղեցեաց քրիստոնէից, և զդիւնս նոցա առնուլ 'ի գանձն Արքունի։ Այլ 'ի բաց թողեալ մեր զայսոսիկ՝ դարձցուք պատմել զվէճս Լատինաց ընդ Հայոց։

Ֆրանչիսկեան կրօնաւորք՝ լեալ ոսերիմ թշնամի եկեղեցականացն Հայոց՝ երկնէին հանապազ 'ի միտս իւրեանց արտաքսել զնոսա իսպառ յայրէն Ծննդեան Քրիստոսի և. խափանել անտի զպաշտօնս նոցա, որպէս և քանիցս փորձ փորձեալ էին, եւ լեալ էր դատաստան և քննութիւն 'ի վերայ այսր խնդրոյ. եւ յայտնի լեալ իրաւունք ազգին, որպէս դրեցաք 'ի վեր անդր. այլ Լատինք ոչ կասեցան յետս՝ զի ոչ ողջոյնքան բանից տնտային, ոչ զիրաւունս այլոց ճանաչել գիտէին, ոչ վճռոյ՝ և ոչ 'ի սպառնալեաց և 'ի պատուիրանաց դատաւորին և այլազգեաց զանգիտէին՝ և ոչ նոյն իսկ Կայսերական հրովարտակաց ունկն դնէին։ Ցեսեալ Գրիգորի պատրիարքի զյամառ միտս և զսպառնալիս նոցա՝ դեգերէր 'ի դրուն այլազգեաց, և աղաչանօք թախանձէր զնոսա դարման տանել իրացն. դրել առ Արքայ և ծանուցանել զխնդիրն հանդերձ դատարանաւ. եւ նոքա յանձն առին՝ եւ դենպետն տուեալ էր առ այս վճիռ հզօր։ Այսպէս ջանիւք և աշխատութեամբ նորին, տուաւ 'ի սմին ամի երկու հրովարտակք յԱրքայէ (Խաթ-թի Շէրիֆ) յաւուրս Սուլթան Մուսթաֆայի առաջնոյ՝ կատարել Հայոց զպաշտօնս յայրին Ծննդեան Քրիստոսի, և մնալ Ջ կանթեղացն 'ի վերայ Մսրոյն։ Ընթերցան այսոքիկ հրովարտակք 'ի դատարանի առաջի բազմութեան՝ ուր էին Լատինք՝ և դատաւորն պատուիրեաց նոցա չհակառակիլ միւսանգամ ընդ Հայս վասն խնդրոյ Ծննդեան, և նոքա խոստացան հնազանդիլ հրամանի Կայսեր և դատաւորին։

Այլ խոստումն նոցա միայն 'ի դատարանի էր, և յետոյ անտի դառնային յառաջին ատելութիւնս. մանաւանդ թէ տեսանէին զանդուլ ջանս և զթախանձանս Հայոց, դեգերեալ 'ի դրուն մեծամեծաց. ինքեանք եւս սկսան թախանձել զԴուռն Արքունի. իբրեւ տեսին թէ չէ հնար փախ-